


ИСТОРИЯ

Հայկական հարցի վերաբացումը Ռուսաստան-մեծ տերություններ հակամարտության պայմաններում Գևորգ Ե Սուրենյանցի աթոռակալության օրոք (1912-1914 թթ.)

Ամիրջանյան Հասմիկ Հ.

պ.գ.թ., ավագ գիտաշխատող,

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0002-4363-0961>
amirjanyan.hasmik@rambler.ru

ՀՏԳ՝ 93.94; EDN: GVXPYS

DOI: 10.58587/18292437-2024.6-52

Հանգուցարաներ և բառակապակցություններ՝ Արևմտյան Հայաստան, Գևորգ Սուրենյանց, ռուսական կառավարություն, բարենորոգումներ, թուրքական կառավարություն, Ամենայն հայոց կաթողիկոս, պետական գործիչներ, Հայկական հարց

Возобновление Армянского вопроса в условиях конфликта России и великих держав во времена патриаршества Геворга Суренянца (1912-1914 гг.)

Амирджанян Асмик О.

кандидат исторических наук, старший научный сотрудник,
Институт истории НАН РА (Ереван, РА)

Аннотация. В статье представлены российско-европейские противоречия 1912-1914 годов во время открытия Армянского вопроса. После первой Балканской войны армянские общественные и духовные деятели стараются поднять Армянский вопрос на Лондонской конференции. Их усилия были направлены на проведение реформ в Западной Армении.

Основой для методологического исследования работы послужили письма и рапорта деятелей этого периода, методологией сопоставления, сравнения и анализа содержащихся в них материалов была предпринята попытка еще раз выявить основные мотивы Армянского вопроса, который по-прежнему актуален и не получил своего решения.

Католикос всех армян Геворг V, сыгравший большую роль в раскрытии Армянского вопроса в 1912, обратившись к разным европейскими и российскими государственными военным и общественным деятелям с просьбой защищать Армянский вопрос на Лондонской конференции. Он пытался через европейских и русских деятелей, а также через российских и европейских послов в Константинополе заставить Турцию провести реформы в Западной Армении. Католикос прилагал большие усилия, чтобы добиться благосклонности российского императора. С этой целью он установил переписку с наместником Кавказа Воронцовым-Дашковым. С другой стороны, Католикос считал, что реформы должны осуществляться Россией и контролироваться Европой.

В результате деятельности армянских деятелей раскрываются российско-европейские противоречия по поводу Армянского вопроса.

В конце концов, программа была составлена, но из-за начавшейся мировой войны - не реализована. А европейские державы и российское правительство руководствуясь собственными интересами ограничивались лишь дипломатическими шагами и обещаниями.

Ключевые слова и словосочетания: Западная Армения, Геворг Суренянц, Турецкое правительство, реформы, Католикос всех армян, государственные деятели, Армянский вопрос, делегация

Reopening of the Armenian Question in the Context of the Conflict between Russia and the Great Powers during the Chairmanship of Gevorg Surenyants (1912-1914)

Amirjanyan Hasmik H.

Senior Researcher, Candidate of Historical Sciences, Institute of History of the
National Academy of Sciences of the Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. The article presents Russian-European contradictions 1912-1914 during the opening the the Armenian question. After the First Balkan War, Armenian public and spiritual figures want attempt to raise the Armenian question at the London Conference. They efforts to carry out reforms in Western Armenia.

The primary basis for the methodological study of the work was letters and reports by figures of theat period by the methodology of comparison, comparison and analysis of the materials contained in them, an attempt was made again to identify the main motives of the Armenian question, which is still actual relevant and has not received its solution.

Catholicos of All Armenians Gevorg V, who played a great role in the discovery of the Armenian question in 1912 receives appealed to various state and public European and Russian statesmen and figures with a request to support Armenian in Londons' conferenc. He tries to force European and Russian figures, as well as Russian and European ambassadors of Constantinople, to force Turkey to carry out reforms in Western Armenia. The Catholicos is making great efforts to gain the favor of the Russian emperor. To this end, he establishes correspondence with the governor of the Caucasus Vorontsov-Dashkov. On the other hand, the Catholicos thinks that reforms should be implemented by Russia and controlled by Europe.

As a result of the activities of Armenian figures, Russian-European contradictions regarding the Armenian question are revealed.

In the end, the program is being drawn up, but because of the outbreak of the world War, it is not being implemented. But the European countries and the Russian government guided by their own interests were limited only to diplomatic steps and promises.

Keywords & phrases: The WesternArmenia, Gevorg Surenyc, The Turkish government, reforms, Catholicos of All Armenians, statesmen, the Armenian question, delegation

1912 թ. Բալկանյան առաջին պատերազմը (1912 թ. հոկտ. 8 (9) - 1913 թ. մայիսի 30) Օսմանյան կայսրության դեմ նախադրյալներ ստեղծեց Հայկական հարցի վերարժարժման համար, որի իրագործման նախապայման է դառնում Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու խնդիրը, ինչը մեծապես շաղկապվում է եվրոպական պետությունների և Ռուսաստանի հետ, որոնք, որպես մեծ տերություններ, ի գորու կլինեին ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա:

Ռուսական կողմի հետ այդ հարցում մեծ հույսեր էին կապում հայ հասարակական, հոգևոր, պետական շրջանակները [2, էջեր 94-95; 11, էջեր 232-233]՝ որպես տարածաշրջանի ամենամոտ, քրիստոնյա և այդ հարցում շահագրգիռ կողմի հետ:

1912 թ. աշնանից սկսած, Գևորգ Ե բազմաթիվ նամակներ է հղում Կովկասի փոխարքա, կոմս Ի. Վորոնցով-Ղաշկովին¹՝ փորձելով նաև վերջինիս միջոցով դիմել ռուսական Նիկոլայ Երկրորդ կայսրին (1894-1917): Կաթողիկոսի նպատակն էր, որ առաջիկայում որևէ «կոնֆերենցիա» լինելու դեպքում (սպասելի էր, որ Բալկանյան պատերազմի ավարտից ու խաղաղության դաշինք կնքելուց հետո պատերազմի արդյունքներն ամփոփելու նպատակով գումարվելու էր մեծ տերությունների խորհրդաժողով) Ռուսաստանն այնտեղ պաշտպանի հայ դատը [2, էջ 101]: Կաթողիկոսը շեշտում է, որ բարենորոգումներ իրականացնելու իրական երաշխիքը Ռուսաստանի հովանավորությունն է, իսկ անհնարին դեպքում՝ վեց մեծ տերությունների (Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ավստրո-Հունգարիա, Ռուսաստան) գործունեությունը [2, էջ 134; 11, էջեր 233-234]:

Ցարական կառավարության պաշտոնական պատասխանում շեշտադրվում է, որ ռուսական քաղաքականությունը հնարավոր է գտնում առաջիկա վեհաժողովում պաշտպանել հայոց

դատը: Սակայն նրանք նախարարների խորհրդի նախագահ Վլադիմիր Կոկովցևի (1911-1914) միջոցով կայսեր անունից հայտնում են, որ հայերի համար լավագույնն է, որ ռուսները միայնակ ստանձնեն այդ դատի պաշտպանությունը:

Սյուս կողմից, ռուսական կողմը համոզված, որ միայնակ չէր կարող իրագործել այդ հարցը, հայերին խորհուրդ է տալիս դիմել նաև մյուս պետություններին, մասնավորապես Անգլիային, որը միշտ համակրանքով է վերաբերվել այդ հարցին, ինչպես նաև Գերմանիային, որ կառուցվելիք Բաղդատի երկաթուղու պատճառով շահագրգռված է հայերի պաշտպանությամբ:

Կ.Պոլսի ռուսական դեսպան Միխայիլ Գիրսը (1911-1914) 1912 թ. նոյեմբերի 26-ին իր կառավարությանն շտապում է տեղեկացնել, որ Գևորգ կաթողիկոսը Կովկասի փոխարքայի միջոցով դիմել է Ռուսաստանին և խնդրել իր հովանավորության ներքո առնել արևմտահայությանը: Դեսպանը հաղորդում է, որ ըստ իր տեղեկությունների, արևմտահայ շրջանակները պատրաստում են ուղերձ, ինչն առաջիկա հաշտության վեհաժողովում պետք է ներկայացվի մեծ տերություններին: Մ. Գիրսին անհանգստացնում էր այն հանգամանքը, որ ուղերձը կարող էր եվրոպական պետություններին ներկայացվել մինչև կոնֆերանսի սկսվելը: Այդպիսով նախաձեռնությունը դուրս կմնար ռուսների ձեռքից: Հետևաբար, դեսպանն անհրաժեշտ է համարում կաթողիկոսին և Կ.Պոլսի հայոց պատրիարքին հավաստիացնել, որ ռուսական կառավարությունը հակված է դեպի հայ ժողովրդի խնդրանքը և անհրաժեշտ դեպքում ցույց կտա հնարավոր հովանավորություն: «Այսպիսի մի խոստում թեկուզ խմբագրուած ամենարդիւնաւոր կերպով, կր տայ թիւրքահայերին յոյս, թէ մէնք կօգնենք եթէ նոր աւարտումներ և կոտորածներ պատահեն և կարող էր նրանց պետութիւններին անմիջապէս դիմելուց յետ պահել: Երբ մենք այդպիսի մի ընդհանուր խոստում տանք հայերին, մենք կարող ենք նոյն իսկ ծածկաբար տայ նրանց հասկանալ, որ ներկայ յոպէին մենք յարմար չենք համարում

¹ Կոմս Իլլարիոն Իվանովիչ Վորոնցով-Ղաշկով (1837-1916) - ռուս պետական և ռազմական գործիչ, Կովկասի փոխարքա (1905-1915):

ընդհանուր բնատրոյթին ունեցող շարժումները»։ Ինչ վերաբերվում է Հայկական վիպայթերը գրավելու հարցին, ինչում մեծ հույսեր են կապում հայերը, «ներկայ թոպէին ինձ վաղաժամ է թուում» [3, էջ 306], - գրում է Գիրսը։ Ռուսաստանի կառավարության համար առավել նպատակահարմար էր Հայկական հարցի խնդրով զբաղվել Բալկանյան պատերազմի ավարտից հետո [6, էջ 135]:

Փաստորեն, անհանգստանալով, որ հայերն իրենց դիմումը կարող են կայանալիք համաժողովին ներկայացնել առանց ռուսական կողմի հետ համաձայնության, ինչի արդյունքում Հայկական հարցի վերաբացման նախաձեռնությունը կանցնի եվոպական պետություններին, ռուսական կողմը քայլեր է ձեռնարկում՝ դրա առաջն առնելու՝ պահպանելու իր առաջնայնությունն այդ հարցում՝ այն համարելով «Ռուսաստանի համար պետական առաջնակարգ կարևորություն ունեցող հարց» [9, էջ 94]: Հետևաբար դեսպանը Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովին (1910-1916) առաջարկում է հայերին «ընդհանուր և բանավոր» կարգով հավաստիքներ տալ:

Մյուս կողմից՝ հայկական կողմի նախաձեռնությունը ռուսների համար նպաստավոր տարբերակ էր՝ եվրոպական պետություններին իրենց պայմանները թելադրելու տեսանկյունից: Այդ հարցում կարևորվում էր ժողովրդական լայն հեղինակություն վայելող Ամենայն հայոց կաթողիկոսի հեղինակությունը: Վերջինիս և հայոց եկեղեցու միջոցով ռուսական կառավարությունը, ինչպես կտեսնենք, փորձեց եվրոպական բանակցությունների ժամանակ առաջնայնությունը վերցնել իր ձեռքը՝ մի կողմից խոստումներ տալով հայկական կողմին, մյուս կողմից՝ խոչընդոտներ առաջացնելով Հայկական հարցի բարձրաձայնման ճանապարհին:

Դրա վառ ապացույցն է այն փաստը, որ Գիրսը և Սազոնովը, ամենայն հավանակալությամբ քննարկումներ ունենալով, պատրիարքարանին խորհուրդ են տալիս Հայկական հարցը շեշտակի հրապարակ չհանել, հեղափոխական շարժումների չդիմել, պատճառաբանելով, որ այդ օրերին դիվանագիտական մթնոլորտը ծանր էր և դժվար կլինեին մեծ տերություններին համաձայնության բերել Հայկական հարցի ցանկալի լուծման շուրջ:

Ռուսական կողմի մոտեցումն արտահայտվում է նաև 1912 թ. դեկտեմբերի սկզբին դոկտոր Չավիրևի² հետ ունեցած տեսակցության ընթացքում, երբ նշվում է, որ «Եվրոպայի աչքին պետք է, որ հայերը ներկայանան իբր գոհեր և ոչ որպես յեղափոխականներ, որոնք կուզեն

² Հակոբ Չավրյան (Չավրիև, 1866-1920), հայ քաղաքական, հասարակական գործիչ, բժիշկ, Ազգային բյուրոյի անդամ:

Թիֆլիսի – նզնաժամային այս օրերը շահագործել իրենց դատի համար...» [9, էջ 94]:

Հետևաբար, ռուսական կառավարության խնդիրն է դառնում խոչընդոտել կաթողիկոսին, Կ.Պոլսի պատրիարքարանին և հայ հասարակական ու քաղաքական շրջանակներին՝ որևէ դիմում հղել եվրոպական պետություններին:

Այդ ընթացքում, սակայն, հայ հասարակական, հոգևոր ու պետական գործիչների ու կազմակերպությունների, այդ թվում՝ Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյի³ կողմից լայն աշխատանք էր ծավալվել Հայկական հարցը կաթողիկոսի միջոցով մեծ տերություններին ներկայացնելու ուղղությամբ [2, էջ 104]: Բացի այդ, 1912 թ. նոյեմբերին Գևորգ Ե-ն Լոնդոնում Եվրոպայի Հայոց հոգևոր թեմի առաջնորդ, Ազգային պատվիրակության անդամ Գևորգ եպիսկոպոս Ութուջյանին, Պողոս Նուբար փաշային⁴, Եգիպտոսի հայոց առաջնորդարանին հղած նամակներում հանձնարարել էր օգնության դիմումներ հղել եվրոպական մեծ տերությունների ներկայացուցիչներին և ԱՄՆ-ին՝ կայանալիք խորհրդաժողովում քննարկելու արևմտահայությանը մարդկային ամենատարական իրավունքներ՝ կյանքի, գույքի, պատվի, ազատ քաղաքակրթվելու, ինչպես նաև անվտանգության երաշխիքներ տալու հարցերը [4, թ. 22]:

Ավելին, կաթողիկոսը Եվրոպա էր գործուղել Սամսոն Հարությունյանին⁵ ու Համբարձում Առաքելյանին⁶ կաթողիկոսի անունից հուշագիր ներկայացնելու մեծ տերություններին: Իսկ դեկտեմբերի 21-ին Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովի դռնփակ նիստում Հայկական հարցը

³ Թիֆլիսի ազգային կենտրոնական Բյուրոն ձևավորվել է 1912 թ. հոկտեմբերին՝ ռուսական կայսրության հայաշատ կենտրոնների ներկայացուցիչների համագումարի խորհրդակցության արդյունքում: Նպատակն էր՝ օգտվել 1912-1913 թթ. բալկանյան պատերազմների հետևանքով ստեղծված իրադրությունից և հասնել Հայկական հարցի լուծմանը: Բյուրոյի կազմում էին հայ ազգային գրեթե բոլոր կուսակցությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ: Տիրապետող դիրքում էր դաշնակցությունը: 1917 թ. դադարեց գործել:

⁴ 1912-1913 թթ. Հայկական հարցի վերաբարձման հարցում առաջ եկած նախադրյալները դրդեցին Գևորգ Ե-ին 1912 թ. նոյեմբերի 10-ի թիվ 1482 կոնդակով խնդրել եգիպտահայ հայտնի բարերար Պողոս Նուբար փաշային (1851-1930) լինել Եվրոպայում իր լիազոր և հայության ներկայացուցիչն առաջիկայում կայանալիք վեհաժողովում (Բալկանյան պատերազմի ավարտից ու խաղաղության դաշինք կնքելուց հետո պատերազմի արդյունքներն ամփոփելու նպատակով Լոնդոնում գումարվելու էր մեծ տերությունների վեհաժողով):

⁵ Սամսոն Հարությունյան (1869-1941) - հայ քաղաքական, հասարակական գործիչ, Կովկասի հայոց բարեգործական ընկերության նախագահ, Թիֆլիսի Ազգային բյուրոյի նախագահ: 1718-1919 թթ. ՀՀ արտգործնախարար: Խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ վտարանդի:

⁶ Համբարձում Առաքելյան (1865-1918) - լրագրող, հասարակական գործիչ, հայ գաղթականների օգնության կոմիտեի (Թիֆլիս, 1915) հիմնադիր:

միջազգային խորհրդատուական ներկայացնելու որոշում է կայացվում:

Կաթողիկոսը, անտեղյակ ռուսական կողմի դիրքորոշումից, 1912 թ. դեկտեմբեր 5-ին և 23-ին հերթական գրություններն է հղում Ի. Վորոնցով-Դաշկովին՝ կրկին խնդրելով միջնորդել կայսրին՝ արևմտահայության շահերը համագումարում պաշտպանելու հարցում [2, էջ 113]:

Վորոնցով-Դաշկովը դեկտեմբերի 22-ին Թիֆլիսից գրավոր ներկայացնում է ռուսական կառավարության կարծիքն այն մասին, որ հայերի շահերից չի բխում «*Թուրքիայում հայկական հարցը տեղաբնակների Կոնցերտի (համաժողով - Հ. Ա.) կողմից Բալկանեան ճգնաժամի կարգավորման նպատակով առաջիկայ համաժողովի քննարկմանը ներկայացնելը, քանի որ բոլոր հիմքերն ունի կասկածելու երոպական տեղաբնակների միակամությունը հայերի համար կենսական հարցի լուծման առումով*» [2, էջ 112]: Փոխարքան կարծիք է հայտնում, որ այդ «միակամության» բացակայությունը և դրանից բխող տարաձայնությունները նպաստավոր վիճակ կստեղծեն թուրքական տեղական վարչակարգի համար՝ խուսափելու հոգուտ հայերի բարեփոխումներ կատարել: Նա ևս իր կառավարության անունից կարևորում է, որ հայերը ցուցաբերեն զսպվածություն և իրենց հավաքական դիմումներով չբարդացնեն Ռուսաստանի կողմից արևմտահայերի վիճակի բարելավման խնդրի իրագործումը, իսկ կաթողիկոսն արևմտահայության հարցով չպետք է դիմի Լոնդոնի դեսպանատնին [2, էջեր 115-116; 6, էջ 136]:

Ելնելով վերոհիշյալից, Գևորգ Սուրենյանցը 1913 թ. հունվարի 4-ին Փարիզում գտնվող Պողոս Նուբարի կոչ է անում եվրոպական դիվանագիտական շրջանակներում նպաստավոր տրամադրություն ստեղծել, որպեսզի Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու և դրանց ընթացքը վերահսկելու նախաձեռնությունն անցնի Ռուսաստանին [2, էջ 104; 8, էջ 7]: Նա Պողոս Նուբարին հորդորում է հարցը քննարկել նաև Բեռլինի և Վիեննայի ռուսական դեսպանների հետ:

Բացի այդ, կաթողիկոսը հավանություն է տալիս հայ դատի համար նպաստավոր կարծիք ստեղծելու ճանապարհին Եվրոպայում «հայասեր կոմիտեներ» ստեղծելու Նուբարի առաջարկին [10, էջ 49]: Կոմիտեներ են կազմակերպվում Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում և Շվեյցարիայում, որոնց քննարկումների առանցքային հարցը եվրոպացիների կողմից բարենորոգումների համատեղ վերահսկողությունն էր:

Փարիզի կոմիտեի մասնախմբի 1913 թ. փետրվարի 5-ից մինչև հունիսի 2-ը տեղի ունեցած նիստի արձանագրություններից տեղեկանում ենք, որ մասնախումբը լայն

գործունեություն է ծավալել և կանոնավոր նիստեր է հրավիրել: Մասնախմբի անդամ Արշակ Չոպանյանը⁷ 1913 թ. ապրիլի 1-ի նիստում ընդարձակ տեղեկություններ է հաղորդում Հայկական դատի, միջազգային կացության և այլ հարցերի վերաբերյալ [5, թ. 14]: Նա գտնում էր, որ Հայկական հարցի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է կապ պահպանել այդ հարցի օգտին գործող բոլոր մարմինների հետ, այսինքն միասնական պայքարի միջոցով միայն կարելի էր հասնել արդյունքի [5, թ. 1]:

Այդ կարծիքին էր նաև Թիֆլիսի հայոց Ազգային Բյուրոյի նախագահ Սամսոն Հարությունյանը, որը գտնում էր, որ Հայոց դատի դիվանագիտական ճանապարհով լուծման հարցում մեծ տեղությունները պետք է լիազորություն տան Ռուսաստանին՝ հայաբնակ նահանգներում իրագործելու ծրագրված բարենորոգումները, քանի որ «*Դա է հայոց դատի բնական լուծման միակ եղանակը*» [5, թ. 3]:

1913 թ. փետրվարի 7-ին Պողոս Նուբարը կաթողիկոսին հայտնում է հայկական պատվիրակության առաջիկա ժողովի մասին, որին հրավիրվելու էին նաև անգլիացի պետական գործիչներ: Նպատակը՝ ներկաներին կաթողիկոսի առաքած պաշտոնագրերի բովանդակությունը ծանոթացնելն էր: Պողոս Նուբարը նաև նախատեսել էր այդ ընթացքում հանդիպել Փարիզում Ռուսաստանի դեսպան Ալեքսանդր Իզվոլսկու (1910-1917) հետ: Նա վստահ էր, որ ռուսական կողմն իր տեսակետն է պնդելու, բայց նպատակ ուներ դրանով ժամանակ շահել [8, էջ 13]:

1913 թ. փետրվարի 10-ին Պողոս Նուբարը կաթողիկոսին իր մտահոգություն է հայտնում այն մասին, որ Բ. Դուբը, օգվելով ռուսական կողմի տրամադրվածությունից, խույս կտա բարենորոգումներից, մանավանդ, որ հայկական կողմին արգելված էր դիմել նաև Ֆրանսիային և Անգլիային. «*...կը գտնուինք երկու ճամբու առջև... Պետք պիտի ըլլայ այս երկու դրույթներէն մին ընտրել, հանգամանքները նկատի առնելով*» [2, էջ 136]: Նա նկատի ունի մի դեպքում եվրոպական պետությունների միջազգային ծրագրին հետևելու անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ ռուսական հակակշիռը, որը միայնակ էր գործելու:

Նման պայմաններում հայկական կողմը, ի դեմս Ազգային պատվիրակության, գերադասում է բարենորոգումների ծրագիր պատրաստելիս առաջնորդվել այն մտայնությամբ, որ այն իրագործվեր Ռուսաստանի անմիջական նախա-

⁷ Արշակ Չոպանյան (1872–1954) - XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ նշանավոր գործիչ, բանասեր, արձակագիր, բանաստեղծ, գրականագետ, քննադատ, թարգմանիչ, լրագրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, «Անահիտ» ամսագրի գլխավոր խմբագիր:

ձեռնությամբ և վեց պետությունների վերահսկողությամբ: Այսպես Եվրոպայի աչքում կփարատվեր հայոց դատը մեկ պետության միջոցով իրականացնելու կասկածը: Պողոս Նուբարը ևս գերադասում էր, որ վերահսկողությունն իրականացվի մեկ պետության կողմից, բայց դրա համար պետք էր, որ «այդ պետությունը յառաջ նետուի» [2, էջ 135]:

Այդ ընթացքում, 1913 թ. փետրվարի 16-ին, Ս. Հարությունյանի և փոխարքայի հանդիպման ժամանակ վերջինս հաստատել էր ռուսական կառավարության դիրքորոշումը: Ազգային պատվիրակությունը կարող է շարունակել աշխատել, բայց՝ բարենորոգումների հսկողության իրավունքը նպատակահարմար է թողնել ռուսական կառավարությանը: Ս. Հարությունյանը կաթողիկոսին է փոխանցում փոխարքայի պահանջը. հայերը պետք է գզուշանան որևէ ծրագիր, հուշագիր կամ առաջարկ ներկայացնել վեց պետություններից որևէ մեկին:

Նման պայմաններում ռուսական կողմի համար յուրջ խոչընդոտ էր հանդիսանում Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակության գործունեությունը: Արգելելով դրա աշխատանքները, ռուսական կառավարությունը կհարուցեր հայ լայն հասարակայնության դժգոհությունը: Հետևաբար, նա որդեգրեց Ազգային պատվիրակության գործունեությունը սահմանափակելու, կամ գոնե ժամանակավորապես կասեցնելու քաղաքականություն՝ փաստացի ձգձգելով հայերի խնդրանքների դիմումները կայանալիք Լոնդոնի դեսպանաժողովին ներկայացնելու հարցը: Ալեքսանդր Իզվոլսկին Պողոս Նուբարից պահանջում է գործունեություն չծավալել, մինչև առաջիկա քայլերի վերաբերյալ Ռուսաստանի արտգործնախարարից պատասխան չստանան, և ամեն ինչ անել՝ «յաջողացնելու Ռուսաստանի նախաձեռնությամբ եւ կոնսորցիի տակ ռեֆորմներ մտցնել տալու Տանկասիայաստանում» [2, էջ 117; 9, էջ 85]: Իսկ կաթողիկոսին հղած գրության մեջ փոխարքան նշում է, որ 61-րդ հոդվածի իրագործումը Ռուսաստանի կողմից հաջողությամբ իրականացնելու նպատակով կաթողիկոսը պետք է պատգամավորություններ ուղարկի եվրոպական պետություններ, որպեսզի «դիպլոմատիկական շրջաններում տրամադրություն ստեղծուի յոզուտ ռուսական նախաձեռնության և կոնսորցիի» [2, էջ 117]:

Այդպիսով, հայկական կողմը հայտնվեց դժվարին կացության մեջ:

Խնդիրը նրանում էր, որ Պողոս Նուբարն ստանալով Կ.Պոլսի պատրիարքարանի և Ազգային պատվիրակության՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ ծրագրերը, առանց Ռուսաստանի կարծիքը հաշվի առնելու դրանք արդեն ներկայացրել էր

Իզվոլսկիին, ինչի համար իր իր դժգոհությունն է հայտնում նաև Ս. Հարությունյանը [5, թ. 3]:

Հետևաբար, կաթողիկոսի խնդիրն է դառնում անմիջապես փոխարքայի միջոցով հայտնել ռուսական արտգործնախարարությանը, որ Փարիզի և Կ.Պոլսի ռուսական դեսպաններին ներկայացված ծրագրերը մասնավոր նշանակություն ունեն և կաթողիկոսի կողմից հաստատված չլինելով՝ գուրկ են պաշտոնական հիմքից:

Այդ ընթացքում, 1913 թ. մարտ-ապրիլ ամիսներին Պողոս Նուբարը կաթողիկոսի հրահանգով հանդիպումներ է ունենում Ա. Իզվոլսկիի, ֆրանսիական, գերմանական և անգլիական պետական գործիչների, այդ թվում՝ ֆրանսիայի արտգործնախարար Ստեֆան Պիշոնին (1857-1933) հետ: Արդյունքում նա կաթողիկոսին հույս է հայտնում, որ «Տարի կառավարության հետևանքով ընդդիմությունը... տեղի չի պիտի ունենայ» [2, էջ 146]: Նրա նամակից պարզ է դառնում, որ նա և կաթողիկոսն, այնուամենայնիվ, հույսեր էին կապում եվրոպական պետությունների հետ:

1913 թ. ապրիլի 29-ին կաթողիկոսը տեղեկանում է, որ եվրոպական երկրների ներկայացուցչները կարծիք են հայտնում, որ Հայկական հարցը աջակցություն կգտնի մեկ պայմանով, երբ այն լուծվի վեհաժողովին մասնակից եվրոպական բոլոր պետությունների վճռով, այլ ոչ թե մեկ [2, էջ 153]: Բնականաբար, եվրոպական գործիչները նկատի ունեին Ռուսաստանին, որը հայկական կողմի համար դիտվում էր բարենորոգումների հարցում առաջնային [10, էջ 50]:

Իրականում ակնհայտ էր, որ եվրոպական պետությունները հետամուտ էին Ասիական Թուրքիայի ամբողջականության պահպանմանն ու սնանկության կանխմանը, իսկ հայկական բարենորոգումները կարևորվում էին այնքանով, որքանով դրանք կնպաստեին այդ քաղաքականության իրականացմանը: Եվրոպական գործիչների համար անտարակուսելի էր, որ առանց բարենորոգումների վաղ թե ուշ տեղի հայությունն ապստամբելու է, քանի որ ժողովուրդը ծանր վիճակում է, և դա «ինչ որ օտար միջամտություն մը կրնայ բերել եւ վտանգել Ասիական Տանկաստանի ամբողջությունը» [8, էջ 23]: Այդ միջամտությունը կարող էր իրականացվել Ռուսաստանի կողմից, ինչը չպետք էր թույլ տալ, հետևաբար Եվրոպայի համար անընդունելի էր հայ-ռուսական համագործակցությունն այդ հարցում:

Այսպես օրինակ, Գերմանիայի ներկայացուցիչները կարծիք են հայտնում, որ Հայոց հարցը Բեռլինի կողմից աջակցություն կգտնի մեկ պայմանով, երբ «հակակշիռը միջազգային ըլլա», քանզի Գերմանիան չի կարող ընդունել, որ այն գործադրվի մեկ պետության կողմից [2, էջ

153]: Եվրոպական մյուս երկրների ներկայացուցիչները ևս համամիտ էին այս գործելաոճին:

Ինչ վերաբերվում էր Անգլիային, ապա Ա. Չոպանյանի կարծիքով թեև չէր կարելի անտեսել այդ երկրի մեծ կշիռը, բայց նրա վրա չափազանց մեծ հույս դնելը սխալ է, քանի որ անգլիական դիվանագիտությունը «...թշնամի էր հայոց ներքին ամենէն սուրբ բաղձանքներուն» [1, էջեր 166-167]:

Նման պայմաններում միակ նպատակահարմար և միջանկյալ ելքը կաթողիկոսը տեսնում է Պետերբուրգի հավանությանն արժանացած ծրագրի վավերացման և եվրոպական վեց պետություններին հանձնելու մեջ: Կաթողիկոսը, սակայն հասկանում էր, որ նման դեպքում անհրաժեշտ էր Եվրոպայում բոլոր, հատկապես ռուսական դեսպանների հետ լավ հարաբերություններ վարել, բայց զգուշությամբ և հեռատեսությամբ, որպեսզի եվրոպական մյուս պետությունները թշնամարար չտրամադրվեն:

Գաևորգ Սուրենյանցն այդ ամբողջ թնջուկի մեջ կարևորում էր մի հանգամանք. պետք է «...զգացմունքների արտայայտության մեջ շատ զգուշ պետք է լինենք եւ ծայրահեղության չպետք է հասցնենք մեր համակրանքի արտայայտությունները դէպի այս կամ այն պետությունը» [2, էջ 186]:

Կաթողիկոսը հասկանում էր, որ Ռուսաստանի խոստումները լոկ խոսքեր են և գտնում էր, որ պետք է շարունակել ձգտել Եվրոպայում բոլոր դեսպանների հետ բարեկամական կապեր պահպանել, պատրիարքարանն իր հերթին պետք է կապերն ընդլայնի Եվրոպայի հայկական պատվիրակության հետ: Ըստ նրա, բարենորոգումների ծրագիրը «համարեա մեռած տառ կմնայ, եթե ընդհանուր նահանգապետը եվրոպացի չլինի» [2, էջ 187]:

Չնայած գործադրված ջանքերին, Լոնդոնի վեհաժողովը 1913 թ. մայիսին չքննեց Փոքր Ասիայի խնդիրները, այդ թվում՝ Հայկական հարցը, քանի որ լիազորված չէր զբաղվելու դրանով: Սակայն դրական նշանակություն էր ունեցել կաթողիկոսի հրահանգը՝ Եվրոպայի հանրության կարծիքը նախապատրաստել Հայկական հարցի վերաբերյալ՝ բանախոսությունների և լրագրական հրատարակությունների միջոցով:

Լոնդոնում Հայկական հարցը չքննարկվելուց հետո Ռուսաստանը պետություններին առաջարկեց Կ.Պոլսի իրենց դեսպաններին լիազորություն տալ՝ հայկական բարենորոգումների ծրագրի սահմանները որոշել:

Այդ ընթացում կաթողիկոսը իր անհամաձայնությունն է հայտնում գերմանական ծրագրի դեմ. այն է՝ հայկական վեց վիլայեթները մեկ նահանգի վերածելու փոխարեն դրանց միացնել նաև Տրապիզոնը և Էրզրումի վիլայեթի հյուսիսային սահմանից մինչև Սվազի հարավային

սահմանը, դրանք բաժանել երկու մասի, նշանակել երկու ընդհանուր քննիչ, պահպանել վայիների պաշտոնը: Կաթողիկոսի համոզմամբ նման ծրագրի իրագործման արդյունքում հայկական բնակավայրերում թուրքական տարրը ստվարանալու էր և բարենորոգումների ծրագիրը ձախողվեր, մանավանդ, եթե քննիչները նշանակվեին թուրքերի կողմից: Գերմանիայի առաջարկությամբ կառավարիչներ պետք է նշանակվեն եվրոպական պետությունների համաձայնությամբ:

Կաթողիկոսը կարծում է, որ գերմանական և թուրքական ծրագրերին հակընդեմ կարող էր լինել միայն ռուսական ծրագիրը, քանի որ ռուսական դիվանագիտությունը բանավոր և գրավոր հուսադրել էր հայերին:

1913 թ. նոյեմբերի 17-ին Գևորգ Ե-ն Պողոս Նուբարին գրում է, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունից պարզ երևում է, որ թե՛ իր շահերի, թե՛ իր քաղաքական հեղինակության տեսանկյունից ռուսական կողմն աշխատում է հաջողացնել վիլայեթների բարենորոգումների հարցը: Իսկ դրա հիմնական հակառակորդը «եռապետական դաշնակցութեան» (Թուրքիա, Գերմանիա և Ավստրո-Հունգարիա) ներկայացուցիչ Գերմանիան էր [8, էջ 59]: Կաթողիկոսը գտնում էր, որ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ծրագրի անհաջողությունը կլիներ Մերձավոր Արևելքում ռուսական քաղաքականության կատարյալ պարտություն:

Կաթողիկոսը 1913 նոյեմբերի 26-ին Հայրապետական դիվանի միջոցով ռուսական Պետական դումայի անդամ Մ. Պապաջանյանին գրում է, որ Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդիրը «...այժմ դարձել է միջազգային հերթական խնդիրներից մեկը» [2, էջ 210]: Նա կարծիք է հայտնում, որ «եվրոպական համաձայնությունը» պաշտպանում է այն ծրագիրը, որին կողմ է նաև Ռուսաստանը և որը նախընտրելի է Հայաստանի համար, իսկ եռապետական դաշնակցությունը՝ Գերմանիայի գլխավորությամբ դեմ է այդ ծրագրին և առաջարկում է վեց վիլայեթները կցել Տրապիզոնի վիլայեթին, բաժանել երկու մասի՝ մեկական քննիչով և այլն: Թուրքիան պատրաստ է բարենորոգումների, բայց դեմ է եվրոպական վերահսկմանը, առանց որի բարենորոգումներն առ ոչինչ են: Կաթողիկոսը կարծիքն է հայտնում, որ անհրաժեշտ է վեց հայաբնակ վիլայեթների (առանց քրդական մասերի) համար նշանակվի մեկ ընդհանուր լիազոր նահանգապետ՝ վեց պետությունների դեսպանների համաձայնությամբ:

Այսպիսով, կաթողիկոսի գրածից հասկանում ենք, որ թուրքական կառավարությունը, ամենայն հավանականությամբ Գերմանիայի դրդմամբ, ամեն գնով դիմադրում էր բարենորոգումների ծրագրին, առանձնապես եվրո-

պական պետությունների միջամտությանն ու վերահսկմանը:

Պողոս Նուբարը համոզվում է և իր հերթին կաթողիկոսին հավաստիացնում, որ Թուրքիայի նկատմամբ անհրաժեշտ է եվրոպական բոլոր պետությունների ճնշումը: Գևորգ Ե-ն իր համաձայնությունն է հայտնում այն հարցում, որ ուժեղ վերահսկողությունը միակ միջոցն է՝ ստիպելու Օսմանյան կայսրությանն իրագործել բարենորոգումները [2, էջեր 217-219]:

Այսպիսով, Հայկական հարցի վերաբացման և դրա վերաբերյալ քննարկումների ամբողջ ընթացքն ընթացավ Եվրոպա-Ռուսաստան հակամարտություններով, ինչի արդյունքում հարցը ոչ միայն ըստ պատշաճին չներկայացվեց միջազգային բարձր առյաններում, այլև ձգձգվեց ու բովանդակային փոփոխությունների ենթարկվեց: Իսկ հայ գործիչները, փաստացի գտնվելով երկու հակամարտության կիզակետում, փորձում էին գտնել միջանկյալ ուղի՝ խուսանավելով եվրոպական ու ռուսական դիվանագիտական խարդավանքների միջնակայքում:

Ի վերջո երկու կայսրությունների՝ Թուրքիայի և Ռուսաստանի 1914 թ. հունվարի 26-ի (փետրվարի 8) համաձայնությամբ ընդունվեց Արևմտյան Հայաստանում անցկացվելիք բարենորոգումների նոր ծրագիր, ըստ որի Արևմտյան Հայաստանը պետք է բաժանվեր երկու նահանգի (առաջինի մեջ մտնում էին Էրզրումի, Տրապիզոնի, Սերաստիայի և Վանի նահանգները, երկրորդի մեջ՝ Խարբերդի, Տրապիզոնի և Բիթլիսի նահանգները): Յուրաքանչյուրում տեղական իշխանությունների գործունեությունը և բարենորոգումների իրագործումը վերահսկելու համար մեծ տերությունների կողմից նշանակվում էր գեներալ-տեսուչ (ընդհանուր վերահսկիչ) [7, էջեր 143-147]:

1914 թ. հուլիսի 28-ին սկսված Առաջին համաշխարհային պատերազմ, ինչպես գիտենք, փաստացի խոչընդոտեց նշանակված քննիչների այցին Արևմտյան Հայաստան:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Զօպանեան Ա.**, Ստեփան Փափագեանի Յուշատետրը: Էջեր 161-177: // «Անահիտ» : Հանդես ամսեայ ազգային, գրական, գեղարուեստական: – Փարիզ : տպ. Morris Pèrè et Fils, 1907, № 10-11-12: – 48 էջ:
2. **Բեիրուդեան Ս.**, Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան: Գիրք ԺԳ, Գևորգ Ե Սուրենեանց Կաթողիկոս Ամենայն հայոց (1847-1930), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու: – Երևան, տպ. Մուղնի: 2005:
3. **Լեօ**, Հայոց հարցի վաւերագրերը: – Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանցի: 1915:
4. Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ 57, ց. 5, գ. 19:
5. ՀԱԱ, ֆ. 282, գ. 4:
6. Հայոց Պատմություն, Հ. 3, Գիրք առաջին, ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստ. – Երևան, 2015:
7. Հայոց Պատմություն, Հ. 3, Գիրք երկրորդ, ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստ. – Երևան, 2015:
8. **Հովսեփյան Է.**, Պողոս Նուբար փաշա, վավերագրեր: – Երևան, հեղինակային հրատարակություն: 2021:
9. **Փափագեան Վ.**, Հայկական Բարենորոգումները (1912-1914): Էջեր 83-99: // «ՎԷԱ» : Երկամսեայ հանդես մշակոյթի եւ պատմութեան: – Փարիզ : տպ. Franco-Caucasienne, 1933, Ա, սեպտեմբեր-հոկտեմբեր: – 160+16 էջ:
10. **Ամիրջանյան Հ.**, Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման հանգամանքները 1913 թ. (Գեվորգ Ե Սուրենյանցի աթոռակալության տարիներին): Էջեր 47-52: // Научно-аналитический журнал «Регион и мир». – Ереван, 2021, № 3. – 162 с.
11. **Нерсисян М.**, Геноцид армян в Османской Империи. Сборник документов и материалов. – Ереван: изд. Айастан. 1982.

Տժանա/Հանձնվել է՝ 21.10.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 28.10.2024

Принята/Ընդունվել է՝ 04.11.2024